



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1870

12/27/70

80

2

L-85

100001

2010

L-85

22
720404



ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՅԱԴՕԳՈՒՑ ԳԻՏԵԼԵԱՅ.

ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՔ




Ի ԹԵՂԵՍԻՍ.

Ի Տպարանի Խաչիպեան Ուսումնարանին.




ՌՅԺԹ = 1870



1958 Ա. Ն. Ժողով
91028-ԱԿ

«Եթէ կրնաս ձայնդ բարձրացնել, խօսէ: Եթէ գիրք միայն թողուն բովը, գրէ: Փողոցին մէջ քարի մը վրայ կանգնած՝ քարոզէ, եթէ կրնաս. եթէ հրապարակական կեանքը փակ է, տանդ մէջ բան սովեցուր: Եթէ ձայն չունիս, օրինակ տալու կարողութիւն ունիս: Այս ոչ առաքինութիւն է, ոչ կարգէ դուրս գործողութիւն. այլ պարտք է՝ պարզ ու յստակ: Աշխարհիս մէջ Աստուծոյ կողմանէ այն եղիր՝ ինչ որ է Քրիշտի մարմնոյ հիւանդութեանց համար. բժիշկը պարտական է հասնելու ամենայն ցաւագարաց, եւ դու պիտի հասնիս ամենայն տգիտաց: Քու Ստեղծողդ կենացդ համարը պիտի պահանջէ քեզնէ: Յոյսդ մի՛ դներ բացասական առաքինութեան վրայ, որ միայն ուրիշի վնաս չընեն է. քեզի օրէնք տրուած է որ հասարակաց գործոյն համար աշխատիս, եղբարքդ սիրես, լուսաւորես, մխիթարես, ազատես մոլութենէ ու մոլորութենէ, եւ առ Աստուած առաջնորդես: Կեանքն ալ այս է, մարդն ալ այս»:



Թեոֆիլ Գրիգորյան,
(Երանապատի կ. Բաղարազէտ վաղըխացի:)

Дозволено Цензурою. Тифлисъ, 30 Октября 1868 г.

Ե Ր Կ Ի Ն Ք

ԵՐ


ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՔ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ.



Աստուածաշունչ սուրբ գիրքը աշխարհիս ստեղծագործութեան պատմութիւնն արած ժամանակը՝ բաւական կհամարի այսքան միայն ասել թէ չորրորդ օրը ստեղծեց Աստուած արեգակը, լուսինն ու աստղերը. արեգակին տուաւ ցորեկը լուսաւորելու պաշտօնը, եւ լուսինն՝ գիշերը լոյս տալու իշխանութիւնը. «Եւ արար Աստուած զերկուս լուսաւորան զմեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուրնջեան, եւ զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ» եւ զաստեղս: Բայց ամենեւին տարակոյս չկայ որ Աստուածաշունչը մեզի կթողու գիտել, զննել, քննել եւ սրջափ կարելի է խելք հասցընել Աստուծոյ արարածներուն, եւ անոնցմէ ալ հասկընալ Արարչին անբաւ մեծութիւնը, անհուն իմաստութիւնը, եւ ամենակարող զօրութիւնը: Որով երկինքն ու երկիրս, կամ որ նոյն է՝ բովանդակ բնութիւնը, մեր առջեւը ահագին գրքի մի պէս բացուած գրած է, եւ մեք պարտական եմք այն գեղեցիկ գիր-



քը կարգալու եւ ըստ կարի հասկընալու, եւ Սրար-
չին փառք տալու, ինչպէս որ կանէին ու կանեն միշտ
ամենայն ճշմարիտ աստուածապաշտ եւ աստուածա-
սէր մարդիկ: Ահա, օրինակի համար, Դաւիթ մար-
գարէն ալ այս տիեզերական գիրքը կարգալով կասէ
մեզի. «Երկինք պատմեն զգործս Աստուծոյ, եւ զարա-
րածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն. — Եր-
կինքը մեզի Աստուծոյ փառաց մեծութիւնը կ'ըբարոզէ,
եւ վերի աշխարհքը անդադար կասէ թէ ինչեր ա-
րած է նորա ձեռքը»:



ԵՐԿԻՆՔ.

Եւ յիրաւի, երբոր պարզ եւ պայծառ դիշեր ժա-
մանակ մարդս աչուրները կ'վերցընէ գէպ ի երկնայ-
ին բարձր ու լայնածաւալ կամարը, այն ինչ հաղա-
րաւոր ու բիւրաւոր լոյսեր՝ աստղեր են որ կցուան
կվառին, որը զատ զատ՝ որը խումբ խումբ, որը մեծ՝
որը փոքրիկ. տեղ տեղ ճերմակ ամպի նման աստղե-
րու բազմութիւններ, տեղ տեղ ալ լայն գօտիի ձե-
ւով ահագին լուսեղէն կամար՝ նոյնպէս մանր ու խո-
շոր աստղերով կարծես թէ բանած ու հիւսուած. եւ
ընդհանրապէս քանի որ երկնքին կապուտակ երեսը
աչքդ անկած միակերպ նայիս, նոր նոր աստղեր կը-
տեսնես, եւ թէ որ աստղերը համբել կուզէիր՝ շու-
տով կ'յուսահասաիս:

Ի՞նչ են արգեօք այս երկնային մարմինները. ինչ
է լուսինը, ինչ է արեգակը. — սրբան փափաքելի
բան է ամէն մտածող մարդու՝ գոնէ այնչափը միայն
գիտնալ՝ որչափ որ մարդկանց կարելի եղած է մին-
չեւ ցայժմ՝ հասկընալ: Այս բնական բազմանքով մար-
դիկ հին առեւնէն ի վեր խիստ շատ դիտողութիւններ
արեր են երկնային մարմնոց վրայ, բայց պարզ աչ-
քով միայն՝ առանց հեռագիտակ (սիրային) բանեցը-
նելու. ուստի եւ նոցա մէջ աստղաբաշխութիւնը այն-
քան ալ ծաղկած չէր՝ որքան որ ծաղկած էր աշխար-
հագրութիւնն ու նաւագնացութիւնը՝ կողմնացուցին
հնարուելէն առաջ: Երկու հարիւր յիսուն տարի է
միայն որ հեռագիտակը հնարուեցաւ. այնուհե-
տեւ սկսան մարդիկ տարուէ տարի եւ ամսէ ամիս
նոր նոր բաներ տեսնել երկնքին երեսը, եւ աստղա-

բաշխութիւնը զարմանալի կերպով առաջ տանիլ, այնպէս որ այժմ քաջ աստղաբաշխները գլխաւոր երկնային մարմնոց ընթացքը եւ զանազան երեւոյթները ամենաճիշդ հաշիւներով ու ապացոյցներով գիր անցուցած են:

Մեր այսօրուան լտարանին նիւթ առնելով ընդհանրապէս երկինքը եւ երկնային մարմինները, առ այժմ գլխաւոր լուսաւորաց վրայ ընդհանուր տեղեկութիւն միայն տամք, ուրիշ անգամի պահելով անոնց պէսպէս յատկութեանցը վրայ մանրամասն պատմութեամբ խօսիլը: Եւ նախ սկսիմք լուսինէն, որովհետեւ երկրիս ամենէն մօտեղած երկնային մարմինն այս է:

Հին ատենէն ի վեր մարդիկ լուսինը առած են իբրեւ ժամանակի չափ մը, անոր համար որ այս լուսաւորը 29 կամ 30 օրուան մէջ մէկ անգամ իւր պէսպէս երեւոյթները կցուցընէ. ուստի եւ շատ լեզուներու մէջ յուսիս ասելն ու ամիս ասելը մէկ է, ինչպէս պարսկերէն մահ, տաճկերէն այ, ռուսերէն մեւեաց, գերմաներէն մոնար եւ այլն: Հիներն ալ գիտէին թէ լուսինը ահագին գունտ մի է, բայց չէին գիտեր թէ արդեօք սրչափ է լուսնին մեծութիւնը, սրբան հեռու է երկրէս, ինչ կապակցութիւն ունի երկրիս հետ, արդեօք միայն մէկ երեսը դարձած է գէպ ի երկիրս՝ թէ անոր ամէն կողմն ալ կտեսնեմք. ինչեր կան լուսնին երեսը, եւ այլն:

Բայց քանի որ հեռագիտակը հնարուեցաւ ու կատարեւագործուեցաւ, իմացան մարդիկ որ լուսնին

երեսը ոչ թէ մարդու երեսի նման է, կամ թէ աչք, քիթ, բերան ունի,—ինչպէս որ ռամիկները կերեւակայէին,—հասպա վրան տեսնուած փայլուն տեղուանքը ահագին լեռներ են, իսկ մութ կամ սեւագոյն բծե-



ԼՈՒՍՆԻ ՏԵՍԲԸ ԼՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ.

րը մեծամեծ ձորեր ու փոսեր, եւ լեռներուն շատը զատ զատ կեցած են. միայն մէկ քանին երկրիս լեռներուն պէս մէկ կարգի կամ շարքի վրայ՝ լեռանց գօտիներ կձեւացընեն: Լուսնին կէսը միայն դարձած

է միշտ գէպ ի երկիրս. եւ երբոր այն կիսուն ալ մէկ փոքրիկ մասը միայն լոյս կառնու արեւէն, մնացեալ մութ կտորին վրայ փայլուն կէտեր կերեւան նաեւ հասարակ գիտակով: Այդ կէտերը լեռներուն վերի ծայրերն են որ արեւուն լուսովը կցոլան: Մութ կտորին այն մասերն որ արեգակ ամենեւին չեն տեսներ իրենց մակերեւութին անհարթութեանը պատճառաւ, սեւ սեւ ձորեր են՝ որոց միայն եզերքը աստիճանաբար արծաթագոյն ցուք մը կառնուն:

Հեռագիտակի ուժով այժմ՝ աստղաբաշխները այնպէս ճիշդ ստորագրած են լուսնին երեսը, այսինքն մեզի դարձած կողմը, որ իւրաքանչիւր մեծկակ կտորին մէկմէկ անուն ալ դրած են:

Լուսնին երեսը երեւցած լեռներուն նման լեռներ երկրիս վերայ չկան, եւ միայն մեր հրաբուխ լեռները իրենց ձեւովն ու բարձրութեամբը քիչ մը անոնց կնմանին: Լուսնի լեռներուն գրեթէ ամենուն ալ վերի ծայրը փոս է, այն փոսին մէջտեղը դարձեալ վեր ցցուած է, ու չորս դին խորունկ՝ հրաբուխներու բերնին կամ բաժակին նման: Կա հեռագիտակով որ նայիս, այն բերնին մէջ կտեսնուին խորտուբորտ քարեր ու լուայի կտորներ. բայց այն քարերը սոսկակի մեծութիւն պիտի ունենան. վասն զի լեռ կայ որ բերնին լայնքը մինչեւ 34 վերսթ է, եւ անոր մէջտեղի լեռը 440 ձողաչափ բարձրութիւն ունի. այնպէս որ քարի կտորներուն մեծութիւնը մինչեւ 180 կանգուն պէտք է լինի:



ԼՈՍՍՆԻՆ ՄԷՋԻ ԼԵՐԱՆՑ ՄԷԿՈՒՆ ՏԵՍԻՔ.

Լսողներուն մտքէն թերեւս անցնի թէ ընչպէս կարելի է այն բարձրութիւնները ճիշդ չափել ու գիտնալ: Ասոր պատասխանը շատ դիւրին ու պարզ է: Երկրիս վրայ կտեսնեմք որ առաւօտ եւ իրիկուն՝ ծառերուն, աներուն, լեռներուն շուքերը աւելի երկայն կլինին քան թէ կէսօրը. եւ այն շուքերը առաւօտը գէպ ի մէկ կողմը կզարնեն, եւ իրիկունը գէպ ի մէկալ կողմը: Նոյն բանը կպատահի նաեւ լուսնին երեսը: Լուսնի նորելէն ետքը, երբոր արեգական լոյսը լուսնին աջ գլխէն կզարնէ վրան, լեռներուն շուքը գէպ ի ձախ դին կզարնէ. լուսնի լրման ժամանակը գրեթէ ամենեւին շուք չմնար. իսկ յետոյ, երբոր վերջին քառորդի ժամանակ լուսնին ձախ կողմի եզերքը կլուսաւորուին, շուքը լեռներուն աջ գլխէն կանցնի, եւ քանի կերթայ կերկրնայ: Արդ այս շուքերուն երկայնութիւնը եւ արեւուն սրքան բարձր լինելը գիտելով ու հաշուելով՝ շատ դիւրին է լեռան բարձրութիւնը չափել իմանալ:

Սրաձեւ լեռներուն մէջ մէկը կայ որ մէկ վերսթ ու 168 ձողաչափ բարձրութիւն ունի. այնպէս որ երբ

լուսնին համար արեւը մարը կմանէ ու բոլոր գաշ-
տաձեւ ու հովտաձեւ կտորները գիշերային մթու-
թեան մէջ կընկղմին, այն սրածայր լեռան վերի ծայ-
րը գեռ երկար ասան ադամանգի պէս կիւայլի, ինչ-
պէս որ մեր Մասիսին ձիւնապատ գագաթն ալ երկար
ատեն կցոլայ՝ նաեւ քովի միւս լեռներուն մթըննա-
լէն յետոյ:

Լուսնին երեսը այնպիսի ընդարձակ տեղումնք ալ
կան որ աստղաբաշխները անոնց ծով, ծովակ, ձահիճ
անուաները գրած են. բայց այն տեղերը մութ ճեր-
մակ կամ մոխրագոյն բիծեր են, եւ ոչ թէ մերին-
ներուն նման ծովեր ու ծովակներ. վասն զի լուսնին
բովանդակ երեսը չոր ու ցամաք է. եւ մինչեւ ցայ-
ժըմ եղած դիտողութիւններէն յայտնի է որ լուսնին
երկրիս նման մթնոլորտ կամ օդ չունի. ուստի եւ անոր
վրայ ոչ ամպ կայ եւ ոչ անձրեւ. եւ մթնոլորտ չե-
ղած տեղը սր եւ իցէ ջրեղէն գոյացութիւն կամ ջրի
բան պէտք է իսկոյն շոգի կամ կաղ դառնայ ու ցըն-
դի: Այն բծերուն մէջ ամենէն մեծը Ովիլանոս սրկեայ
ասուածն է, որոյ վրայ տեղ տեղ մանեկաձեւ լեռ-
ներ ու լեռներու շարքեր կան, տեղ տեղ ալ գիծ գիծ
ձորի նման գօտիներ: Ոմանք կարծիք արած են որ
գուցէ այն գծերը ճամբայ են. բայց այդ կարծիքը
անհիմն է. վասն զի գծերուն ամէն մէկը գոնէ 600
կանգուն լայնք ունի, ինչ բանի կուգայ այնպիսի ճամ-
բան: Ուրիշ ծովեր ալ կան որ կասուին ծով Պայծառ
օդոյ, ծով Հումպոլթի, ծով Անձրեւաց, ծով Ամպոց,
եւ այլն. նմանապէս հազարէն աւելի լեռներ որ չա-

փուած են, եւ իւրաքանչիւրը մէկ մէկ անուանի
մարդկանց անուաներովը կկոչուին. ինչպէս ասոնք՝
որ գրեթէ իրարու քով են կարգաւ. Արակոյ, Ապո-
զոնիոս, Յուլիոս Կեսար, Նէփիր, Պլինիոս, Սթրուվէ,
Պլուտարքոս, Լաիլաս, Կութէմպլերկ, Անաքսիմենէս,
Հերշէլ եւ Գուք: Եւ այս լեռանց մէջ ամենէն բարձ-
րը Նեւտոն կասուի, ու եօթը վերսթ բարձրութիւն
ունի, որոյ նմանը երկրիս վրայ միայն Հիմալայա
լեռներուն ամենաբարձր սարն է:

Հեռագիտակով լուսնին նայողը կզմայլի նաեւ ա-
նոր վրայի այլ եւ այլ ծովերուն պէսպէս գեղեցիկ
գոյներուն. վասն զի որը կանանչ է, որը մոխրագոյն,
որը սկեգոյն, որը արծաթագոյն:

Լուսնին բոլոր մակերեւոյթը կամ երեսը քիչ մը
մեծ է Ամերիկայի երեսէն եւ քիչ փոքր է Ասիայէն.
Իսկ այն կտորը որ միշտ գէպ ի երկիրս դարձած է՝
Ասիոյ ու Եւրոպայի Ռուսաստանէն փոքր է, եւ գրե-
թէ 550 հազար քառակուսի մղոն տարածութիւն ու-
նի: Հաշիւ արած են որ եթէ կարելի լինէր երկրիս
չորս գին՝ հասարակածին շտկութեամբը, այսինքն
երկրագնախո ճիշդ մէջտեղովը երկաթուղի մը շինել
անոր երկայնութիւնը կլինէր 37 հազար 548 վերսթ.
Եւ եթէ 24 ժամուան մէջ 800 վերսթ ճամբայ կտրէր
անոր վրայ շոգեկառքը, 47 օրուան մէջ բոլոր եր-
կրիս շրջապատը կպըտըտուէր անով. իսկ լուսնին
շրջապատը նոյն կերպով եւ նոյն համեմատութեամբ՝
15 օրուան մէջ կարելի պիտի լինէր ճամբայ անել:
Ի հարկէ կարելի բան չէ ամենեւին. բայց գնեմք թէ

երկաթուղի մը շինուէր երկրէս դէպ ի լուսինը. երկայնութիւնը կլինէր 560 հազար 473 վերսթ, եւ կարելի կլինէր հոն հասնիլ 450 օրէն:

Եթէ յանկարծ մէկ կերպով մը լուսնին մէջ գտնուէինք, երկիրս կտեսնէինք մեր գլխուն վրայ ահագին լուսաւոր գետի նման, չորս անգամ աւելի մեծ քան թէ ինչպէս որ այժմ լուսինը կտեսնեմք. եւ այն գունտը 24 ժամուան մէջ ինքիւր վրայ պտըտելովը՝ անոր երեսին ամէն կտորներն ալ կերեւային մեզի: Պէտք էր բաւական պայծառ կերպով տեսնէինք անկից նաեւ երկրիս երեսի ծովերը, անտառները, դաշտերը, երկու բեւեռներուն կողմերն եղած սառոյցները, հասարակածին երկու կողմի հիւանալի կանաչութիւնը, եւ այլն:

Լուսնին մէջ մեզի նման բնակիչ կամ ո՞ր եւ իցէ տեսակ կենդանի կնչ արդեօք:—Թէպէտ եւ այս ամենեւին յայտնի չէ, բայց տարակոյս չկայ որ երկրիս երեսի կենդանեաց մէկ տեսակն ալ պէտք չէ գտնուի լուսնին մէջ, որովհետեւ այնտեղը ոչ օդ կտեսնուի եւ ոչ ջուր, առանց որոց մեր գիտցած կենդանիներն ապրիլ չեն կրնար: Այսու ամենայնիւ Աստուծոյ ամենակարող զօրութեանը չափ եւ սահման չկայ. շատ կարելի է որ լուսնին մէջ ալ անոր տարերացն ու կազմութեանը յարմար կենդանիներ գտնուին՝ մեր գիտցածներէն բոլորովին տարբեր:

Արեգակը երկրէս մէկ միլիոն չորս հարիւր տասնըհինգ հազար անգամ աւելի մեծ է: Այս ահագին տարբերութիւնը հասկընալը անոր համար ալ դը-

ժուար է որ մեք արդէն երկրիս մեծութիւնը չեմք կրնար գիւրաւ երեւակայել: Բայց այսպիսի կերպ մը հնարք մը կարելի է բանեցընել՝ արեգական ու երկրիս իրարմէ ունեցած տարբերութիւնը գոնէ մերձաւորապէս հասկընալու համար:—Երկիրս երեւակայեմք կլորիկ ոլոռի (ուլեռի) հատին չափ, կամ թէ փոքրիկ սիսեռի չափ բան մը. այն ատեն արեգակը պէտք է գնեմք այնպիսի գունտ մը՝ որոյ տրամագիծը լինի մէկ կանգուն. կամ թէ արեգակը երեւակայեմք մեծկակ խնձոր մը, երկիրս անոր դիմացը կլինի խաշխաշի հունտին մէկ հատիկը: Այնքան է արեգական մեծութիւնն որ եթէ երկրիս չորս բոլորը երկաթուղիով պտըտելու համար 47 օր պէտք է ասինք, նոյն համեմատութեամբ եւ նոյն չափ արագութեամբ եթէ արեւուն չորս գին կարելի լինէր պտըտիլ նոյնպիսի երկաթուղիով, պէտք էր գիշեր ցորեկ անդադար երթայինք 14 տարի ու 160 օր:

Հապա ինչէն է որ արեգակը մեր աչքին այնպէս կերեւնայ որ իբր թէ լուսնինէն շատ աւելի մեծ ալ չէ: Ասոր պատճառը յայտնի է. վասն զի նա մեզնէ 145 միլիոն 472 հազար վերսթ հեռու է. եւ այս սոսկալի հեռաւորութիւնը երեւակայելու համար դարձեալ ձեռք առնումք այն համեմատութիւնն որ առաջ ասինք: Երկիրս ցուցընող սիսեռը մէկ կանգուն տրամագիծ ունեցող գունտէն՝ որ է արեւը՝ 100 քայլ հեռու գնեմք, իսկ լուսնին տեղը գնեմք մանանեխի (հարսալի) հատիկ մը՝ երկրէս չորս մասնաչափ հեռու: Ի՞նչ սարսափելի ոյժ է ուրեմն այն ձգողութիւնը՝

որով այնքան հեռաւորութեան մէջ արեգակը իրեն կքաշէ երկիրս ու պարսատիկի (ասիակի) մէջ գրուած քարի մը պէս ման կբերէ :

Բայց արեւն ալ բիծեր (յեփեներ) ունի կասեն . եւ ճշմարիտ է . միայն թէ մինչեւ ցայժմ չեն կրցած աստղաբաշխները հասկընալ թէ այն բծերը ի՛նչ են : Սովորական կարծիքն այս է թէ արեգակն ալ գիմահար մարմին մի է՝ բայց բռնկած . անոր ահագին բոցերուն մէջէն տեղ տեղ ու ժամանակ ժամանակ մարմնոյն այս կամ այն կտորը կերեւայ մութ ու սեւ սեւ , եւ անոնք են բծերը :

Արեւուն երեսը հեռագիտակով կերեւան երբեմն լուսաւոր գծեր կամ գօտիներ , երբեմն մութ կտորներ , եւ երբեմն բոլորովին սեւ բծեր . այս բծերը առաջ արեգական ձախ կողմը կտեսնուին , կամաց կամաց կշարժին դէպ ի աջ կողմը , կարծես թէ արեւուն երեսէն կանցնին , ու աջ գին երթալով բոլորովին կծածկուին : Ասոնց այս շարժմունքէն իմացուած է որ արեւն ալ երկրիս պէս ինքիւր վրան կպըտըտի , միայն թէ 24 ժամուան մէջ չէ , հասաւ 25 օրուան ու վեց ժամուան մէջ : Բայց զարմանալին սրն է . — երբեմն այս բծերը ամենեւին չեն տեսնուիր , եւ երբեմն խիստ շատ կերեւան , եւ մինչեւ ցայժմ ոչ կանոնաւոր ձեւ տեսնուած է անոնց վրայ եւ ոչ կանոնաւոր ընթացք :

Երբոր բիծը արեւուն մէջտեղն է , սովորական գիրքը կամ տեսքը այս է . արեւուն լուսաւոր մթնոլորտին վրայ փլածի կամ բացուածքի նման կտոր մը կերեւի ,

եւ անոր ետեւը կտեսնուի մթնագոյն բիծը . երբեմն մէկ քանի մանր բծեր հինգ վեց շաբթուան մէջ կխառնուին ու կմիանան իրարու հետ , երբեմն ալ մէկ բիծը այլ եւ այլ մանր բծեր կբաժնուի : Կարծիք կլինի որ արեւուն մթնոլորտին վրայ զանազան յորձանքներ փոթորիկներ կպատահին որ այդ փոփոխութիւնները կանեն . բայց թէ ի՛նչպէս եւ ի՛նչ պատճառաւ՝ ամենեւին յայտնի չէ : Երբեմն այնպիսի ահագին մեծութեամբ բծեր կերեւան որ բոլոր երկրիս մակերեւութէն մինչեւ 12 անգամ աւելի տարածութիւն ունին :

Արեւուն բծերը անտարակոյս ազդեցութիւն ունին նաեւ երկրիս տաքութեանը եւ մեր մթնոլորտին մէջ պատահած փոփոխութիւններուն վրայ . բայց թէ սրճափ կամ ի՛նչ կերպով՝ դեռ չէ իմացուած : Ոմանք կասեն թէ բծերը կչափաւորեն ու կբարեխառնեն արեւուն սաստիկ տաքութիւնը , եւ ոմանք կարծիք կանեն թէ բծերը նշան են որ արեւը հեռոճեաէ , այսինքն մէկ քանի հազար տարիէն , կրնայ իւր տաքութիւնը կորսընել , եւ ս՝ գիտէ՝ գուցէ Արարչին մէկ սահմանած ժամանակը կայ որ բոլորովին ալ պազի ու լոյսը կորսընցընէ : Ի՛նչ սոսկալի գուշակութիւն երկրիս համար՝ որոյ հոգին ու կենդանութիւնը արեւուն լոյսն ու տաքութիւնն է :

Արեգական չորս բոլորը կպըտին Մոլորակներ , այսինքն երկրիս նման մարմիններ՝ որ իրենց լոյսն ու տաքութիւնը արեւէն կառնուն . բայց այս ամէն մոլորակներն ալ այնպիսի սոսկալի հեռաւորութիւններ

ունին արեւէն ու իրարմէ որ երեւակայութեամբ եւս
ըմբռնելը շատ դժուար է: Բայց որպէս զի կարե-
նամք գոնէ մերձաւոր համեմատութեամբ հասկընալ
այս հեռաւորութիւնները, դարձեալ մէջ բերեմք ա-
ռաջին օրինակը:

Արեւն էր մեզի համար՝ մէկ կանգնաչափ թանձ-
րութիւն ունեցող գունարը, զոր գնեմք մէջտեղը՝ ա-
հագին դաշտի մը մէջ: Անկից 40 քայլ հեռու գնեմք
փոքրիկ գնդասեղի գլուխ՝ կամ կորեկի հատիկ մը,
որ կլինի Փայլածուն, արեւուն ամենէն մօտ գտնուող
մոլորակը: Գունտէն 70 քայլ հեռու գնեմք փոքրիկ
սիսեռ մը, որ է Արուսեակը. հարիւր քայլ անդին
ուրիշ սիսեռ մը, Երկիրս. մեծիկ կորեկի հատ մը
160 քայլ հեռուն, կլինի Հրատը: Գլխաւոր գունտէն
Երկու երեք հարիւր քայլ հեռուն կձգեմք 14 հատ
աւազի հատիկներ, սոքա կլինին մանր մոլորակները,
Փլորա, Վիկտորիա, Վեստա, Իրիս, Հերա, Դեմետրէ
եւ այլն: Գունտէն 500 քայլ հեռու գնեմք միջակ մե-
ծութեամբ նարինջ (փօրթուզալ), կլինի Լուսնի թագը,
որ ամենէն մեծ մոլորակն է. իսկ 1000 քայլ հեռուն
փոքրիկ նարինջ մը գնեմք, Երեւակն է: Ուրանոս կամ
Հերշել մոլորակին տեղը գնեմք կեռաս մը՝ գունտէն
գրեթէ մէկ ու կէս վերսթ հեռուն, եւ Պոսիգոն մոլո-
րակին տեղը, որ ամենէն հեռուն է, ընկոյզ մը կը-
գնեմք՝ գունտէն 2 վերսթ հեռու:

Այս ամենայն մոլորակները, որոց մէջ է նաեւ մեր
փոքրիկ սիսեռաչափ Երկիրս, ու սորա հետ խաշխաշի
հզօնտ՝ Լուսինը, միշտ անփոփոխ պահելով իրենց ի-

րարմէ եւ արեւէն ունեցած հեռաւորութիւնները, ի
սկզբանէ աշխարհի կազմութիւն ման կազման անդադար
այն մեծ գունտին չորս բոլորը՝ ըստ աստուածագիր
անխախտ օրինաց:


Սոցա շարժմունքին արագութիւնը, շուտութիւնը,
խելքէ մտքէ դուրս բան է: Երկիրս իրեն շրջանը՝
այսինքն արեւուն չորս դին անելու ճամբան, որ 910
միլիոն վերսթէն աւելի է, կկըտրէ մէկ տարուան
մէջ. այնպէս որ ամէն մէկ րոպէին (սեկունդ) կթռչի
28 վերսթ տեղ, կամ թէ մէկ ժամուան մէջ 40 հազար
800 վերսթ: Այսպիսի խելքէ դուրս արագութեանց
առջեւ ինչ պիտի լինին Երկիրս վրայ մարդկանց
հնարած շարժմունքներուն նաեւ ամենէն շուտ երեւ-
ցողները:

Բնական բան է հարցընելը թէ արդեօք ինչ կեր-
պով կամ ինչ հնարքով կրցեր են աստղաբաշխները
չափել Երկիրս հեռաւորութիւնը, անով նաեւ ուրիշ
մոլորակաց Արեւէն ունեցած հեռաւորութիւնը: Մին-
չեւ ասկից հարիւր վաթսուն տարի առաջ իրաւ որ
աստղաբաշխները շատ աշխատեցան՝ խելք յոգնեցու-
ցին, հաշիւներ արին որ Երկիրս Արեւէն որչափ հեռու
լինելը ճիշդ գտնեն չափեն, անկարելի եղաւ: Վեր-
ջապէս անցեալ դարուն սկիզբները գտնուեցաւ բոլո-
րովին նոր հնարք մը, որ էր այս: Արուսեակ մոլո-
րակը Երկրէս աւելի մօտիկ է արեգական. ուստի մեք
կրնամք տեսնել որ նա արեւուն չորս դին պտըտած
ժամանակը՝ երբեմն անոր լուսաւոր սկաւառակին վը-
րայէն անցնելու ատեն փոքրիկ սեւ բծի մը պէս կե-

րեւնայ: Արդ երբոր երկրիս այլ եւ այլ տեղերէն դի-
տուի Արուսեկին՝ Արեւուն սկաւառակին մէջ մտնեն
ու ելնելը, հարկաւ պիտի տեսնուի այդ բանը այլ եւ
այլ ժամանակ, թէպէտ եւ տարբերութիւնը լինի մի-
այն վարկեաններով ու բոպէներով: Այսպէս, օրինակի
համար, եթէ երկու հոգի այլ եւ այլ տեղեր կեցած
նային ուրիշ մարդու մը մէկ տան մը առջեւէն անցնի-
լը, երկուքին մէկուն հարկաւ այնպէս կերեւնայ որ
այն անցաւորը ճիշդ տանը առջեւը հասած է, մինչ-
դեռ միւսը կարծէ թէ դեռ նա տանը մօտենալու
վրայ է: Եւ ահա Արուսեկին շարժմանը տեսնուած
ժամանակին տարբերութիւնը, եւ դիտողութիւն ե-
ղած տեղերուն իրարմէ հեռաւորութիւնը հաշուի առ-
նելով, կրցան աստղաբաշխները ճիշդ հաշուել երկ-
րիս Արեւէն ունեցած հեռաւորութիւնը: Արուսեկին
Արեւուն սկաւառակէն ետքի անգամ անցնիլը եղաւ
1769-ին, Մայիսի 25-ին, եւ այն ժամանակը ճշդուե-
ցաւ երկրիս հեռաւորութիւնը արեւէն: Եւ բոպայի
բոլոր քաղաքակիրթ աէրութիւնները մասնակից եղան
այն բանին, եւ կատարինէ կայսրուհին եօթը աստ-
ղաբաշխ յուղարկեց Ռուսաստանի այլ եւ այլ կողմե-
րն որ այն դիտողութիւնն անեն, եւ ինքը Օւանի-
էնպաւմի պալատէն եօթը վերսթ հեռուն առժա-
մանակեայ դիտարան շինել տուած լինելով, անկից
նայեցաւ դիտեց Արուսեկին Արեւուն սկաւառակէն
դուրս ելնելը՝ առաւօտեան ժամը երեք ու կէսին:

Իսկ ի քսանուերկու մոլորակներէն՝ Արեգական
չորս բոլորը կպարտին նաեւ ուրիշ շատ երկնային

մարմիններ, որ երբեմն Արեւուն շատ մօտենալով՝
մեղի ալ կերեւան, եւ երբեմն կհեռանան կերթան ու
աներեւոյթ կլինին. եւ ասոնք են Գիսաւորները կամ
պոչաւոր աստղ ասուածները: Սորա ատենով սարսափ




1811-ԻՆ ԵՐԵՒԱՅԻ ԳԻՍԱՎՈՐԸ.

կձգէին ռամիկ ժողովրդոց վրայ՝ իբրեւ չարագուշակ
երեւոյթներ. վասն զի նոքա կարծէին թէ գիսաւորի
մը երեւնալը անպատճառ նշան է պատերազմի, կամ
սովի, կամ փոխադրական սատորի հիւանդութեան եւ
այլն. բայց գիտութեան լուսովը այն ամենայն նախա-
պաշարմանց թանձր խաւարը փաբատեցաւ, եւ իմա-
ցուեցաւ որ գիսաւորները պատահական երեւոյթներ
չեն, հազա ամէնքն ալ քանի մը հարիւր, կամ դու-
ցէ նաեւ քանի մը հազար մոլորակներ են որ կպար-
տին արեւուն չորս գին ըստ անյեզլի օրինաց՝ զոր
գրեր է նոցա Արարիչը: Այժմ մինչեւ 180-ի չափ



գիսաւորաց ընթացքը համրուած է, եւ խմացուած է թէ անոնցմէ ոմանք իրենց շրջանը կկատարեն արեւուն չորս գին 1200 օրուան մէջ, ոմանք աւելի երկար միջոցով, որը 6 տարուան մէջ, որը 76; որը 500, որը մինչեւ 9800 տարուան մէջ: Ինչպէս այն գիսաւորն որ երեւցեր է 1680 ին' նորէն պիտի գայ 9800 տարիէն, այն թուականէն հաշուելով: Եւ որովհետեւ այն գիսաւորը Պոսիդոն մոլորակէն ալ 28 անգամ աւելի հեռու պիտի երթայ, ասել է թէ 112 միլիոն 500 վերսթ տեղ է անոր երթալիքը, այսինքն 5615 անգամ աւելի հեռու՝ քան թէ որչափ որ է երկրիս Արեւէն ունեցած հեռաւորութիւնը:

Աստղաբաշխները երկար ժամանակ այս կարծիքին վրայ էին թէ Արեգակը բոլորովին անշարժ է. եւ սակայն այժմ՝ ամենեւին տարակոյս չկայ որ արեգակն ալ սաստիկ սրընթաց շարժմունք մը ունի: Երկիրս երեք տեսակ շարժմունք ունի. մէկովը ինքը իւր առանցքին վրայ կպտըտի 24 ժամուան մէջ, միւսովը արեւուն չորս գին՝ մէկ տարուան մէջ, եւ երրորդովը արեւուն հետ ի միասին կթաւալի գէպ ի անսահման հեռաւորութիւն մը: Այժմ՝ ստուգուած է որ արեգակն ալ երկրիս նման է իւր շարժմանցը կողմանէ, եւ իւր բոլոր մոլորակներովն ու անհամար գիսաւորներովը կթուչի տիեզերաց անհուն ընդարձակութեանը մէջ՝ մէկ րոպէին 66 վերսթ տեղ կըտրելով, ու կերթայ գէպ ի այն համաստեղութիւնը՝ այսինքն հաստատուն աստեղաց խումբը՝ որ կասուի Համաստեղութիւն Հերակլէսի:



Աստղաբաշխները հաստատուն աստղերը համրելու եւ անոնց վրայ խօսելու համար՝ խումբ խումբ բաժնած են զանոնք, ամէն մէկ խումբին մէկ մէկ մարդու, կենդանույ կամ ուրիշ բաներու անուններ զննելու այս խումբերն են որ համաստեղութիւն կասուին, եւ 108 հատ են: Ամենապայծառ համաստեղութեանց մէկն ալ Հայի կամ Որիսն կոչուածն է, որոյ վրայ 78 հատ



Հ Ա Յ Կ.

աստղ կայ, երկուքը առաջին կարգի աստեղաց մեծութիւնն ունեցող, այսինքն աջ ուսին վրայինն ու ձախ ոտքինը. գօտիին վրան ալ 3 աստղ կայ՝ մէկ կարգի վրայ:

Այս ալ հաւաստի է այժմ որ Արեգակը հաստատուն կամ անշարժ կարծուած աստղերէն մէկն է, եւ սր եւ իցէ մօտաւոր մէկ աստղէ մը նայողին պէտք է Արեգակը երեւնայ համաստեղութեան մը փոքրիկ աստղին չափ եւ անոր պէս բան :

Մեծ Արջ կամ Մայր ասուած համաստեղութիւնը, օրինակի համար, այնպէս կերեւնայ որ իբր թէ իրարու մօտ կեցած աստղերու խումբ մի է. սակայն շատ կարելի է որ այն աստղերն իրարմէ անհուն հեռաւորութիւններ ունին, թէպէտ եւ մեր աչքին անոնք երկնքին երեսը դամուածի պէս կերեւան :

Ամէն օր բոլոր աստղերն ալ Արեւուն պէս կծագին, երկնային կամարէն կանցնին՝ առանց փոխելու այն հեռաւորութիւնն որ ունին իրարմէ, եւ Արեւուն պէս կմըտնեն : Մեզի այնպէս կերեւնայ որ իբր թէ անոնք ամէնն ալ կպտըտին մէկ աստղի մը չորս գին՝ որ մեր հիւսիսային բեւեռին վրայ անշարժ կեցած է, եւ կասուի Բեւեռային աստղ. բայց իրօք մեք եմք պտըտողը երկրիս հետ ի միասին, ու երբեմն այս՝ երբեմն այն համաստեղութեան տակը կգտնուիմք :

Հրատ մոլորակէն հասարակ աչքով նայողը պէտք է տեսնէ երկիրս՝ մեծկակ՝ կամ երկրորդ կարգի աստղի մը չափ. իսկ գիտակով նայողը պիտի կարենայ տեսնել երկրիս մթնոգոյն ծովերն ու ցամաքները՝ որ միայն Արեւուն մեր վրայ զարկած ժամանակը փայլուն ու լուսաւորուած կերեւան. իսկ Լուսնի մոլորակէն նայողը կամ ամենեւին չտեսնէր երկիրս

պարզ աչքով, եւ կամ չորրորդ կարգի աստղերուն մեծութեամբը հազիւ թէ կտեսնէ :

Մինչեւ ցայժմ ասածներէս ալ հասկըցուեցաւ որ մեր բանեցուցած չափերը, վերսթ, քիլոմետր, մղոն, փարսախս, հազար վերսթ, տասը հազար՝ հարիւր հազար՝ միլիոն վերսթերը, մէկ կանգունի՝ մէկ մատնաչափի նշանակութիւն ալ չունին երկնքին կամ Տիեզերաց անհուն եւ անսահման ընդարձակութեան առջեւ :

Արեւուն ամենէն աւելի մօտիկ կեցող հաստատուն աստղէն նայողը՝ պէտք է որ տեսնէ այս մեր Արեւը երկրորդ կամ երրորդ կարգի աստղի մը պէս, եւ սորա չորս գին պտըտող բոլոր մոլորակներն ու գիտաւորները այն փոքրիկ աստղին ճառագայթներուն մէջ կխառնուին ու աներեւոյթ կլինին :

Ծիր կաթին կամ Յարդոդ (տաճկերէն հաւրյար եօրա կամ սաման օրուառ) ասուած լուսաւոր կամարին վրայ՝ որ կտեսնեմք երկնքին երեսը, ութուուն միլիոնէն աւելի աստղ համրած են, բայց կարելի է թէ աւելի ալ շատ են, եւ ամէն մէկ աստղը գուցէ մեր արեգակէն ալ մեծ է : Եթէ այն անհամար արեւներուն լոյսը երկնքին սոսկալի ընդարձակութեանը մէջ չընկղմէր՝ չկորսուէր, երկնքին ամէն մէկ կէտին պայծառութիւնը արեւուն պայծառութեանը կհաւասարէր :

Մեր արեւուն ամենէն աւելի մօտիկ գտնուող աստղը կերեւի որ Քնար համաստեղութեան աստղերէն մէկն է, որ 30 միլիոն 301 հազար 286 վերսթ հեռու է արեւէն : Այս այնպիսի հեռաւորութիւն է՝ որուն մար-

դուս երեւակայութիւնը չկրնար հասնիլ: Եթէ կարելի լինէր երկրէս մինչեւ ամենէն մօտիկ եղած հաստատուն աստղը երկաթուղի մը շինել, անով հօն հասնելու համար պէտք էր հազարաւոր ու բիւրաւոր տարիներ կամ դարեր:

Մեզի մինչեւ ցայժմ՝ ծանօթ արագութիւններուն մէջ ամենէն սաստիկը լուսոյ արագութիւնն է, որ մէկ րոպէի մէջ 599 հազար 270 վերսթ տեղ կվազէ. այսու ամենայնիւ այնքան է երկնից ընդարձակութիւնը եւ լուսաւորաց իրարմէ հեռաւորութիւնը, որ Արեւուն ամենէն մօտիկ կեցող հաստատուն աստղին լոյսը 3 տարուան մէջ հասած է Արեւուն, ուրիշ աստղերէն 9 տարուան մէջ, ուրիշներէն ալ 12 տարուան մէջ: Իսկ Ծիր կաթին ասուած կամարին միլիոնաւոր աստղերէն լոյսը հազարաւոր տարիներէն հազիւ թէ կրնայ հասնիլ մեզի:

Կտեսնես երկնքին մէկ կողմը երկու աստղ, մէկը կապուա՝ միւսը գեղնագոյն, որ իրարու վրայ կպարտին. անգին ուրիշ երկու աստղ, մէկը նարնջագոյն կարմիր՝ միւսը կանանչ, իւրաքանչիւրը արեւէն մեծ, որ իրարու վրայ կգառնան 38 տարուան մէջ, եւ գուցէ ամէն մէկն ալ իրեն համար մոլորակներ սնի: Դարձեալ ուրիշ կողմը ուրիշ երկու աստղեր որ իրենց շրջանը կկատարեն 632 տարուան մէջ. եւ ս գիտէ սրբան այսպիսի աստղեր ալ կան տիեզերաց անհուն ընդարձակութեանը մէջ:

Կնայիս հեռուն հեռուն փոքրիկ աստղ մը կայ որ քանի կերթայ կաճի կմեծնայ ու կարծես թէ կմօտե-

նայ, յետոյ դարձեալ կպակսի կպըզտիկնայ ու կերթայ կծածկուի անսահման երկնքին հեռաւորութեանը մէջ:

Կտեսնես դարձեալ տեղ տեղ երկնքին երեսը լուսաւոր ամպի նման բիծեր, որ Միգուանս կասուին. այժմ լաւ դիտակներով ստուգուած է որ այն միգամածներն ալ խումբ խումբ աստղեր են, միլիոնաւոր աստղեր, որոց մէջէն մեր Ծիր կաթինը անշուշտ փոքրիկ միգամածի նման բան մը կերեւի:

Ո՞ր վաւրըռուն երեւակայութիւնը կարող է դիմանալ այսքան եւ այսպիսի արարածոց անհուն եւ անսահման մեծութեանն ու ընդարձակութեանը, եւ սր մարդկային զգայուն սիրտը չհիանար՝ չբզմայլիւր Արարչին Աստուծոյ ամենակարող զօրութեանը վրայ եւ չաղաղակեր մարգարէին հետ. «Ո՞րպէս զի մեծ են գործք քո Տէր. զամենայն ինչ իմաստութեամբ արարեր . . . Օրհնեցէք զՏէր երկինք, օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան»: Եւ ահա այս մտածութեամբ եւ այսպիսի զմայլմամբ շատ բանաստեղծներ՝ ամէն ազգէ եւ ամէն ժամանակ երգեր են տիեզերաց եւ երկնային զարգուց գեղեցկութիւնը, եւ միանգամայն Արարչին Աստուծոյ ամենակարող զօրութիւնը: Կարժէ ուրեմն որ մեք ալ այսօրուան մեր լսարանը վերջացընեմք մեր Շնորհալի սուրբ հայրապետին «Յազագս երկնից եւ զարգուց նորա» վերնագրով գեղեցիկ ոտանաւորին մէկ քանի տուները քաղելով. վասն զի երկնքին բերնէն խօսելով այսպէս կասէ.

Իմ եղական գործը բնութիւն եւ սկզբնական,
 Յանկէն ձրգեալ կամար անգուգական,
 Անշրպպետեմ զշուրսն վերին եւ ներքնական,
 Որպէս պատմէ զինէն Մովսէս աստուածարան : . . .
 Անքանակ եմ եւ չափից անչափական .
 Այլ եւ թրգաւ միով չափիմ, Թէ ոչ մարդկան :
 Պարունակող եմ անզգայնոց եւ զգայական,
 Պարունակիմ յայլմէ վեհէ անտեսական .
 Բոլորակ եմ կիսագունդ որպէս խորան,
 Բնութեամբ կայուն, անծամբ շարժուն անկայական :
 Հիմն եւ աւարտ եմ գոյութեանցս այս նիւթական .
 Անդունդք ի խոր, բարձունք ի վեր մինչ վերանամ :
 Ոչ ոմն անդունդք, ոմրն բարձունք անխոխական .
 Չի չեմ կայուն եւ միշտ ի նոյն, այլ շրջական .
 Այլ որ անդունդք, նոյն եւ բարձունք են վերնական .
 Եւ որ բարձունք, նոյն եւ անդունդք են ստորնական :
 Շարժիմ յաւետ, Թրոջիմ արագ անհասական .
 Ի շարժմանէ Թարթեղ ական մի չկայանամ :
 Տանն եմ մեծի ձեղուն չարկին պարածգական .
 Ոչ լեցեալ լինչ, ոչ սինք նեցուկ պարարտանան :
 Քանզի ձրգեաց զիս եւ պարզեաց որպէս վրան,
 Ոչ պընդելով լարից հնարիք, այլ միայն բան :
 Ժամանակաց երկարութեամբ եւ ոչ հնանամ,
 Եւ ի գունոյ պայծառութեան չտրգեղանամ :
 Գոյն իմ աջաց տեսողութեան բողբատական,
 Միշտ հայելով ոչ վրտանգին կամ ձանձրանան :
 Հողմոց հընջմամբ ոչ տատանիմ, այլ կանգուն կամ .
 Յորտանանէ ոչ սասանիմ, այլ զօրանամ .
 Քանզի ի ծոց իմ են սոքա իբրոս ձընան .
 Եւ ըստ կամաց իժոց շարժին, չեն ապրտամբ : . . .
 Ունիմ առ տիւ՝ պայծառատիպ մի կարկեհան,
 Եղեալ ի լանջս ըստ վակասին ահարոնեան .

Պեսայօրէն ջերմամբ սիրոյ յոյժ բղձական
 Գիրկս արկանէ հարսին իւրոյ խնտառութեան :
 Իսկ առ գիշեր՝ սպիտակափայլ բիւրեղանման,
 Որ միշտ աճէ եւ նըւազէ հընգետասան .
 Չափէ ըզթիւ ժամանակաց առուրց մարդկան,
 Չոր եւ քընարքն տասնաղի երգէ դաւեան : . . .
 Են եւ ակունք լիս պատուականք եւ բազմազան .
 Ոմանք նըւաղ, այլք պայծառ բոցանըման :
 Յաջըս մարդկան են յոգնակի եւ անթուական .
 Իսկ յարարչէն ի Թիւ անկեալ անուանեցան .
 Որք օրինակք են արդարոց ի յարութեան .
 Չի կէսք նըւազ՝ այլք առաւել պայծառանան : . . .
 Եւ գալարիմ որպէս կոնդակ կըտակագրեան,
 Կամ մագաղաթ յորժամ ի հրոյ հոտ մերձենան .
 Չի վարագոյր եմ անոռոյն արքունական,
 Որքան ծածուկ է յաշխարհէ այս նիւթական .
 Եւ մինչ կամի յայնուել ծածկեալ լոյն էական,
 Բառնան ի բաց զիս սպասաորքն աննիւթական :
 Գայ իջանէ մեծ Թագաւորն ահեղական .
 Յայտնի անեղն էից հանուրց՝ որ եղական .
 Յարուցանէ որք են մեռեալ ի գերեզման,
 Նըստի յաթուռ աստուածային դատողական,
 Տարով բարեացն անձառ բարիս յարքայութեան,
 Չարացն ըզբար հուր գեհնելին միշտ յախտան :
 Յայնժամ եւ զիս նոր զարդարէ զարմանազան,
 Եւ զուսաւորս իմ պանծալի յոյժ հրաշական .
 Ոչ ի պիտոյս շքրջագայից, որպէս եւ այժմ .
 Չի անդ մի տիւ, ոչ գոյ գիշեր հատանող զայն,
 Նորոյ երկնից նորոյ երկրի, որք նորանան .
 Տարից քառից, ուարք ընդ նոքօք պարագրեցան :
 Չի ակն ունին որք ընդ գըլխոյն ծառայեցան,
 Յազատանալ գըլխոյն ինքեանց ազատութեան :

Արդ, բա քանի սուրբ Սաղմոսաց երգոյ դասձեան ,
 Ջգործս արարչին իմ խօսեցայ ես՝ որ անբան .
 Երկինք պատմեն զիառու Աստուծոյ յոյժ լրուելեացն ,
 Եւ զարարածս հաստատուծիւնս անձայնական :
 Ընդ որս ես ես , որ սպասաւորս եմ բանական ,
 Որ ի դիմաց երկնից գրեցի սակաւ զայս բան ,
 Նայիմ յերկինս եւ նրկատեմ զայս ամենայն ,
 Եւ փառքս տամ անեղ բնութեան արարչական :

*Լսեցէք ի վերջէ , պատուական ունկնդիրք , թէ
 Բնչպէս կիսորհրդածէ նաեւ Ռուսաց հռչակաւոր բա-
 նաստեղծը Լոմննոսով՝ Աստուծոյ մեծութեանը վրայ՝
 Հիւսիսայգի մը երեւնալէն առիթ առնելով , ու եր-
 կնային մարմնոց ահագին հեռաւորութիւններուն ու
 տիեզերաց ընդարձակութեանը վրայ հիանալով .*

Յորեկն ահա կրպոհէ իւր երեսը ,
 Դաշան ու արտերը ծածկեց մութ գիշերը ,
 Սարերն ի վեր երկրնցաւ սես ըստուերը ,
 Հեռու գընաց մեզնէ ցոլուն արեսը .
 Աստղերով լի անդունդն ահա բացուեցաւ .
 Ոչ աստեղք թիւ ունին՝ ոչ տակ անդունդը :

*

Բնչպէս ծովուն ալեացը մէջ առագիկ ,
 Կամ մըշտընջեան սառուցից մէջ կայծ փոքրիկ ,
 Կամ շամանդալ ի սաստկաշունջ փոթորիկ ,
 Կամ կատաղի կըրակին մէջ փետուրիկ ,
 Յայս անդունդը այնպէս ահա խորունկցած
 Կըկորսուիմ մըտքովրս մէջն ընկըղմած :

*

Կասեն մեզի գիտուն մարդոց բերաններ ,
 Թէ այն տեղը լիան շատ ու շատ աշխարհներ .
 Այն տեղ անթիւ են արեւներ վառ ի վառ ,
 Ազգ եւ ազինք՝ տարիք դարեր անհամար .
 Աստուածութեան անբաւ փառացը համար
 Հոն ալ բնութեան զօրութիւնն է հաւասար :

*

Բայց ո՞վ բնութիւն , ո՞ր մընաց քու օրէնքը .
 Այս Բնչ այգ է կէս գիշերուան կողմանքը .
 Հոն արեգակն արդեօք անտուն է գըրած .
 Սրբեօք ցոյք է սա ծովերուն սառ կապած .
 Այս Բնչ պաղ բոց է որ ըզմեզ կըծածկէ ,
 Ի՞նչ ցորեկ է որ գիշերանց կըծագէ :

*

Ո՞վ իմաստունք , կորովարիբ աչքերով ,
 Դուք որ ըզգիրն յաւիտենից կարդալով ,
 Ո՞ր եւ իցէ բանի փոքրիկ նըշանէն
 Կըհասկընաք Բնութեան կարգէն կանոնէն ,
 Մոլորակաց Տամբան ձեզի յայտնի է .
 Ատէք՝ Բնչ է որ ըզմեզ ման կըբերէ :

*

Ի՞նչ է գիշեր ատեն նըշուլ արծըկողն ,
 Ի՞նչ է բարակ բոցն ի յերկինքը նետողն .
 Փայլակն առանց սեւ սեւ ամպերու Բնչպէս
 Երկրէս զենիթ կըյարձըկի սաստկապէս .
 Ի՞նչպէս կըրնայ պաղած սառած գոլորշին
 Ջըմեւ ատեն վառել հըրդեմի ահագին : —

*

Հոն պարարտ մէզն ու ջուրն իրար կըզարնեն,
 Կամ արեւէն հառազայմներ կըցատքեն,
 Թանձր օդերուն մէջէն մեզի կըվազեն,
 Կամ թէ իւղոտ ջրոց երես կըվառեն,
 Կամ թէ զեփիւռն ի ծով փըջեն է կըարած,
 Ողորկ ալիք կըզարնըին եմերաց: —

*

Ձեր պատասխանքը լի են կասկածանօք,
 Մինչդեռ մօտիկ բաներու վրայ է մեր խօսք.
 Ասէք, սրբան է աշխարհիս չափն ու հոն,
 Եւ ինչ բան կայ մանր աստղերէն ալ հեռուն:
 Արարածոց ծայրն անգամ ձեզ է թաքուն,
 Հապա սրբան է Արարչին մեծութիւն:




ՀՐԱՏԱՐԱԿԵՍԼ.

Աւագ Երկուշաբթի.
 Աւագ Երեքշաբթի.
 Աւագ Չորեքշաբթի.
 Աւագ Հինգշաբթի.
 Աւագ Ուրբաթ.
 Հատիկ սուրբ Յարութեան Տեառն.
 Ծնունդ եւ Մկրտութիւն Տեառն.
 Սուրբ Հռիփսիմեանք.
 Մեծն Ներսէս Պարբեւ.
 Եգիպտոսի հնուրիւնները.
 Երուսաղեմի առումն ու տաճարին կործանումը.
 Կոստանդնուպոլսոյ առումն յՅամանեանց.
 Արեան ու Մոլորակները.
 Երկինք եւ Երկնային մարմինք.

ՊԱՏՐԱՍՏԻ Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Համբարձումն.
 Հոգեգալուստ.
 Վարդավառ.
 Վերափոխումն.
 Սուրբ Խաչ.
 Տեառներդառաչ.
 Բուն Բարեկենդան.
 Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.
 Որդիք եւ բոռունք սրբոյ Լուսաւորչին.
 Սուրբ Սարգիս Չօրավար.
 Սուրբ Մինաս.
 Սուրբ Անտոն ճգնաւոր.
 Յօր երանելի.
 Թաղեոս առաքեալ, Ս. Սանդուխտ կոյս, եւ Ս. Շուշանիկ.
 Ժամ եւ ժամերգութիւն.
 Ջերմութիւն եւ Ջերմաչափ.
 Մետեորազիտութիւն, կամ Գուշակութիւնք օդոց.
 Մրջինք եւ Մեղուք.
 Տնտեսութիւն.
 Օղապարիկ.
 Մեծն Պետրոս, եւ այլն:



9½ stsrulphu 10 fnh.

80

0023412

2013

« Ազգային գրադարան »



NL0023412

